Հայաստանի Հանրապետության
Մարդու Իրավունքների Պաշտպան

# Արտահերթ հրապարակային զեկույց Հայաստանի Հանրապետության վրա ադրբեջանական զինված հարձակման հետևանքների վերաբերյալ

**Սեպտեմբեր, 2022թ.**
**(Թարմացված)**



Երևան, Հայաստան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ 3

II. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4

III. ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅԱՏՅԱՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 6

1. Խոշտանգումն ու վատ վերաբերմունքը փաստող տեսանյութերի լայն տարածումը: 7

2. Կին զինծառայողների նկատմամբ անմարդկային ու խտրական վերաբերմունքը. 9

3. Ադրբեջանական լայն հանրության վերաբերմունքը խոշտանգման հրապարակումներին 10

4. Պաշտոնատար անձանց և հասարակական գործիչների հայտարարությունները և ադրբեջանցի երեխաներին ուղղված ատելության քարոզչությունը 12

5. Սահմանամերձ բնակավայրերի բնակչության ահաբեկումը՝ որպես հայատյաց քաղաքականության դրսևորում. 19

IV. ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ 22

1. Տեղահանված անձինք, ռազմական ակտիվ գոտիներից չտարհանված առավել խոցելի անձինք 22

2. Բժշկական շտապօգնության մեքենաների ու լրագրողների թիրախավորում 24

V. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 27

VI. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ 30

VII. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՒ ԿԵՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄ 34

1. Սպանված և վիրավորված քաղաքացիներ 34

2. Քաղաքացիական տներ, և կենսական նշանակության ենթակառուցվածքներ և այլ օբյեկտներ 35

Ա. Քաղաքացիական տներ, ավտոմեքենաներ 35

Բ. Վարչական ենթակառուցվածքներ 36

Գ. Էլեկտրամատակարարում և գազամատակարարում 37

Դ. Սեփականության իրավունքի խախտումներ 39

VIII. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ 40

IX. ՁԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՀԱՍՑՎԱԾ ՎՆԱՍՆԵՐ 43

X. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 47

## I. ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

1. 2022 թվականի սեպտեմբերի 12-ի լույս 13-ի գիշերը Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գծի ահազանգերից, տեղական և այլ աղբյուրներից ստացված տեղեկություններից պարզ դարձավ, որ Ադրբեջանի զինված ուժերը լայնածավալ և համակարգված հարձակում են ձեռնարկել Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի վրա՝ շփման գծի արևելյան և հարավ-արևելյան հատվածներում՝ կանխամտածված թիրախավորելով Կապան, Գորիս, Քարաշեն, Վերիշեն, Խնածախ, Կոռնիձոր, Խոզնավար, Իշխանասար, Ճակատեն, Ներքին Հանդ, Ծավ, Դավիթ-Բեկ, Արտանիշ, Սրաշեն, Ջերմուկ, Վարդենիս, Սոթք, Նորաբակ, Կուտ, Գեղամասար և Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի այլ սահմանամերձ համայնքների խաղաղ բնակչությանը: Ադրբեջանական զինված ուժերի կողմից կիրառվել են տարբեր տրամաչափի զինատեսակներ՝ ներառյալ ծանր հրետանի, տարբեր տրամաչափի ականանետեր, անօդաչու թռչող սարքեր, խոշոր տրամաչափի հրանոթներ և «Գրադ» տեսակի համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր:

2. Ադրբեջանի կողմից իրականացված զինված հարձակումն ուղեկցվել է միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների կոպիտ խախտումներով:

3. Ադրբեջանի զինված ուժերի հարձակումը խախտել է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությունն ու ինքնիշխանությունը: Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով նկարագրվածը հանդիսանում է ակնհայտ խախտում, մասնավորապես՝ «*Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում ձեռնպահ են ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ և, կամ Միավորված ազգերի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից*»: Ավելին, Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության VII գլխի 51-րդ հոդվածը սահմանում է, որ «*Սույն Կանոնադրությունը ոչնչով չի խաթարում անհատական կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության անկապտելի իրավունքը Միավորված ազգերի կազմակերպության որևէ անդամի հարձակման ենթարկվելու դեպքում, քանի դեռ Անվտանգության խորհուրդը չի ձեռնարկի միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման միջոցառումներ*»:

4. Հարկ է ընդգծել, որ պետությունների միջև սահմանները պաշտոնապես սահմանագծված և սահմանազատված չլինելու հանգամանքը չի ազատում պետություններին որևէ պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուժի սպառնալիքից և ուժի կիրառումից ձեռնպահ

մնալու պարտավորությունից: Նախանշվածն ամրագրած է ՄԱԿ-ի կանոնադրությամբ և, ըստ այդմ, արգելվում է զինված հարձակում ձեռնարկել հարևան պետության ինքնիշխան տարածքի վրա՝ վտանգելով սահմանամերձ համայնքների բնակիչների իրավունքներն ու կյանքը:

5. Առանձնակի մտահոգիչ է այն հանգամանքը, որ հարձակման ժամանակ ադրբեջանական կողմը թիրախավորում է խաղաղ բնակչությանը և կենսական նշանակության քաղաքացիական ենթակառույցները՝ կոպտորեն խախտելով միջազգային մարդասիրական իրավունքը և մարդու իրավունքների միջազգային իրավունքը:

6. «Պետությունների միջև Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությանը համապատասխան բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագիրը (թիվ 2625 բանաձև) վկայակոչում է «պետությունների պարտավորությունը զերծ մնալ ցանկացած պետության անկախության կամ տարածքային ամբողջականության դեմ ուղղված ռազմական, քաղաքական, տնտեսական կամ որևէ այլ բնույթի հարկադրանքից»:

7. Բացի այդ, ադրբեջանական զինված հարձակումը Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի վրա, խախտում է 2020 թվականի նոյեմբերի 9-ի հրադադարի մասին եռակողմ հայտարարությունը, որում նշվում է, որ կողմերը կանգ են առնում իրենց զբաղեցրած դիրքերում (այն դիրքերում, որոնք զբաղեցնում էին հայտարարության ստորագրման պահին)[1]:

8. Սեպտեմբերի 14-ին ժամը 20:00-ից հաստատվել է շատ փխրուն հրադադար, սակայն այն շատ հաճախ խախտվում է, օրինակ՝ սեպտեմբերի 28-ին ժամը 18:00-ից սկսած Ադրբեջանի կողմից խախտվել է հրադադարը Ջերմուկի ուղղությամբ, կիրառվել են ինչպես խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներ, այնպես էլ հրետանային միջոցներ և անօդաչու թռչող սարքեր, որի կիրառման արդյունքում երեք հայ զինծառայող է զոհվել:

## II. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

9. Սույն զեկույցի նպատակն է հավաքագրել, վերլուծել և ներկայացնել 2022 թվականի սեպտեմբերի 13-ից մեկնարկած Ադրբեջանի զինված ուժերի կողմից Հայաստանի վրա զինված հարձակման ընթացքում միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքի կոպիտ խախտումները:

[1] Հասանելի՝ https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/

10. Սույն զեկույցում ներկայացված փաստական տվյալներն ընդգրկում և լրացնում են սույն թվականի սեպտեմբերի 16-ին հրապարակված արտահերթ զեկույցի[2] տվյալները՝ ներառելով ամփոփված փաստեր սկսած սեպտեմբերի 13-ից մինչև սույն զեկույցի հրապարակման պահը:

11. Մարդու իրավունքների պաշտպանը, որպես Խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմ, ընդունված պրակտիկայի համաձայն, առանձին ոչ հրապարակային զեկույց է պատրաստել, որում անդրադառնում է ադրբեջանական զինված ուժերի կողմից հայ ռազմագերիների նկատմամբ խոշտանգման ու վատ վերաբերմունքի փաստերին, որոնք արձանագրվել են սեպտեմբերի 13-ից մեկնարկած հարձակմանը հաջորդող օրերին:

12. Սույն զեկույցը հիմնված է, ի թիվս այլնի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի (ՄԻՊ աշխատակազմ) փաստահավաք աշխատանքների վրա, որի շրջանակներում ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչներն այցելել են Գեղարքունիքի մարզի Սոթք, Կութ և Նորաբակ համայնքներ, ինչպես նաև Սյունիքի մարզի Վերիշեն, Ակներ, Քարաշեն, Վաղատուր, Խոզնավար, Աղիտու, Նորավան համայնքներ և Վայոց ձորի մարզի Ջերմուկ, Կեչուտ համայնքներ: Այցելությունների ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները անհատական հարցազրույցներ են ունեցել համայնքների ղեկավարների, բնակիչների, տարհանված և տեղահանված, ինչպես նաև տարբեր վնասվածքներ ստացած և բժշկական կենտրոններում համապատասխան բուժօգնություն ստացող/ստացած անձանց հետ: ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչներն այցելել են նաև Երևանի հիվանդանոցներում բժշկական օգնություն ստացող տուժած անձանց:

13. Սեպտեմբերի 13-ին Պաշտպանի փաստահավաք խումբը Գեղարքունիքի մարզի Սոթք համայնքում աշխատել է ակտիվ հրետակոծության պայմաններում, ինչի արդյունքում ի վիճակի է եղել հավաքագրել արժեքավոր տեղեկություններ և տեղում արձանագրել մարդկանց տարհանման ու պատսպարման գործընթացները:

14. Սեպտեմբերի 13-ից սկսած Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերի ՄԻՊ տարածքային գրասենյակների ներկայացուցիչները հարձակման ենթարկված համայնքներում իրականացրել են լայնածավալ փաստահավաք աշխատանքներ՝ համագործակցելով տեղական ինքնակառավարման մարմինների, տարածքային կառավարման մարմինների, տեղի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և այլ դերակատարների հետ:

15. ՄԻՊ աշխատակազմն իրականացրել է նաև մեդիա հարթակներում հրապարակված նյութերի մշտադիտարկում, վերլուծել ՄԻՊ աշխատակազմին և

[2]Արտահերթ հրապարակային զեկույց Հայաստանի Հանրապետության վրա ադրբեջանական զինված հարձակման հետևանքների վերաբերյալ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, Երևան, 2022, հասանելի՝ https://ombuds.am/images/files/163fcca24261af7864b6d9f4fcf1d365.pdf (դիտված՝ 30.09.2022թ):

վերջինիս տարածքային գրասենյակներին՝ այդ թվում՝ 24/7 թեժ գծին ուղղված ահազանգերը: Մշտադիտարկումը ներառել է նաև Ադրբեջանի զանգվածային լրատվական միջոցների և սոցիալական մեդիայի ուսումնասիրությունը:

16. Սեպտեմբերի 13-15-ն ընկած ժամանակահատվածում, Մարդու իրավունքների պաշտպանն ամենօրյա ձևաչափով պատրաստել և մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող միջազգային կազմակերպություններին, միջազգային գործընկերներին և ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչություններին է ուղարկել միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների խախտումների մասին հաղորդումներ: Մարդու իրավունքների պաշտպանը սույն իրադարձությունների վերաբերյալ միջազգային գործընկերների հնարավոր հարցերին պատասխանելու նպատակով ստեղծել է հաղորդակցության հատուկ խողովակ վերջիններիս համար:

## III. ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՅԱՏՅԱՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

17. Ինչպես 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում, այնպես էլ դրանից հետո ադրբեջանական իշխանությունների հայատյաց քաղաքականությունը փաստագրվել և ներկայացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցներում:[3] Զեկույցներով հավաստվել է, որ հայերի նկատմամբ ազգային հիմքով ատելության և թշնամանքի սերմանման քաղաքականությունը 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում էթնիկ հայերի նկատմամբ ադրբեջանցի զինծառայողների կողմից կիրառված խոշտանգման և դաժան, անմարդկային, նվաստացնող վերաբերմունքի խորքային պատճառներից մեկն է:

18. Ադրբեջանում հայերի նկատմամբ լայնորեն տարածված ատելության, անհանդուրժողականության և թշնամանքի առկայությունը, պաշտոնատար անձանց հայատյաց հռետորաբանությունը և դրա շարունակական բնույթը հաստատվել են նաև միջազգային կառույցների և մշտադիտարկում իրականացնող մարմինների կողմից: Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի կողմից Ադրբեջանում հայերի նկատմամբ անհանդուրժողականության և ատելության

[3] «Հայերի նկատմամբ ատելության և թշնամանքի ադրբեջանական քաղաքականությունը որպես մարդու իրավունքների՝ էթնիկ հիմքով խախտումների խորքային պատճառ: Հետ-պատերազմյան զարգացումների փաստահեն վերլուծություն» արտահերթ զեկույց, ՀՀ մարդու իրավունքների պաշտպան, Երևան, 2022, Հասանելի՝ https://ombuds.am/images/files/3101f60c869b0f378dbc737b002e5054.pdf (անգլերեն), դիտված՝ 30.09.2022, «Էթնիկ հայերի նկատմամբ կազմակերպված ատելության խոսքն ու թշնամանքն Ադրբեջանում որպես Ադրբեջանական զինված ուժերի էթնիկ հիմքով խոշտանգման և անմարդկային վերաբերմունքի Joint ad hoc public report “Organized Hate Speech and Animosity towards Ethnic Armenians in Azerbaijan as Root Causes of Ethnically-based Torture and Inhuman Treatment by Azerbaijani Armed Forces (September-November 2020), Hu man Rights Defender of Armenia, Human Rights Ombudsman of Artsakh, 2020, Available at https://www.ombuds.am/images/files/2032f021fe81176414a649d588ad0e86.pdf (Accessed 30 September, 2022).

խոսքի տարածման մասին (այդ թվում՝ պետական հաստատությունների կողմից) առաջին անգամ նշվել է դեռևս 2002 թվականին[4]:

19. Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեն Ադրբեջանի 10-ից 12-րդ պարբերական հաղորդումների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել սոցիալական ցանցերում, ինչպես նաև հասարակական գործիչների և պետական պաշտոնյաների կողմից ազգությամբ հայերի նկատմամբ ռասայական ատելության հրահրման և ռասիստական կարծրատիպերի տարածման կապակցությամբ (կետ 4(c)) և Ադրբեջանի ղեկավարությանն առաջարկել է միջոցներ ձեռնարկել ինչպես ինտերնետում և սոցիալական ցանցերում, այնպես էլ պաշտոնատար անձանց և հանրային հաստատությունների կողմից ազգությամբ հայերի դեմ ուղղված ատելության խոսքի, ռասայական ատելության և խտրականության հրահրման և խթանման մշտադիտարկման և դրանց դեմ պայքարի ուղղությամբ (կետ 5(d)):

20. Կոմիտեն նաև մտահոգություն է հայտնել այն առնչությամբ, որ դպրոցական դասագրքերը պարունակում են նախապաշարմունքների քարոզում և ռասայական ատելության հրահրում, հատկապես էթնիկ հայերի նկատմամբ: Ավելին, Կոմիտեն մատնանշել է Ադրբեջանի կողմից նախապաշարմունքների և անհանդուրժողականության դեմ պայքարելու, ինչպես նաև դպրոցական և համալսարանական ծրագրերում մարդու իրավունքները ներդնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների առնչությամբ տեղեկատվության բացակայությունը (կետ 34):[5]

## 1. Խոշտանգումն ու վատ վերաբերմունքը փաստող տեսանյութերի լայն տարածումը:

21. Ինչպես 44-օրյա պատերազմի ընթացքում, ս.թ. սեպտեմբերի 13-ի հարձակումից հետո ևս ադրբեջանական սոցիալական ցանցերում տեղադրվում են Ադրբեջանի զինված ուժերի կողմից հայ զինծառայողների նկատմամբ խոշտանգումները և այլ անմարդկային ու նվաստացնող վերաբերմունքը փաստող տեսանյութեր: Տեսանյութերը պարունակում են ինչպես հայ զինծառայողների նկատմամբ ֆիզիկական բռնության, նվաստացնող վերաբերմունքի, վիրավորանքի և ծաղրանքի, այնպես էլ զոհված զինծառայողների մարմինների նկատմամբ

[4] Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով, Ադրբեջանի վերաբերյալ զեկույց՝ ընդունված 2002 թվականի հունիսի 28-ին, CRI (2003) 3, պար. 51-53:

[5] Հասանելի՝ https://tbinternet.ohchr.org/Treaties/CERD/Shared%20Documents/AZE/CERD_C_AZE_CO_10-12_49770_E.pdf (անգլերեն), դիտված՝ 30.09.2022թ.:

անմարդկային վերաբերմունի կադրեր: Ընդ որում, հարկ է նկատել նաև, որ այս ընթացքում հրապարակվել են նաև 2020 թվականին նկարահանված որոշ տեսանյութեր ևս՝ դրանք ներկայացնելով որպես ս.թ. սեպտեմբերի հարձակմանն առնչվող իրողություններ: Նպատակը հայ հանրության շրջանում, նման դեպքերի մասսայականության կեղծ տպավորություն ստեղծելու միջոցով, դեռևս թարմ հանրային տրավման ու ահաբեկումը խորացնելն է:

22. Բռնության, խոշտանգման ու նվաստացման տեսանյութերի բովանդակությանն առնչվող մանրամասները վերլուծված են Մարդու իրավունքների պաշտպանի առանձին արտահերթ ոչ հրապարակային զեկույցում, որը Պաշտպանը կազմել է որպես Խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմ: Միաժամանակ, կարևոր է արձանագրել, որ այն հանգամանքը, որ 2020 թվականի 44-օրյա պատերազմին ադրբեջանցի զինծառայողների կողմից դրսևորվող վարքագիծը նույն կերպով շարունակվել է և սույն թվականի սեպտեմբերին, վկայում է նաև այն մասին, որ այդ արարքները մնում են անպատժելի և այդպիսով խրախուսվում են ինչպես ադրբեջանական իշխանությունների, այնպես էլ ռազմական ղեկավարության կողմից: Հայ զինծառայողների խոշտանգման, նրանց նկատմամբ անմարդկային վերաբերմունքի դրսևորման համատարած բնույթը թույլ է տալիս նաև եզրակացնել, որ այս արարքները չէին կարող կատարվել առանց ռազմական ղեկավարության հանձնարարականի կամ առնվազն իմացության և թողտվության: Իրենց հանցավոր արարքի տեսագրմամբ և հրապարակայնացմամբ ադրբեջանցի զինծառայողներն, այդպիսով, չեն առերեսվում պատասխանատվության ենթարկվելու վտանգին, ուստիև ստիպված չեն դրսևորել իրավաչափ վարքագիծ կամ առնվազն ցուցաբերել զգուշավորություն:

23. Ակներև են նաև տեսանյութերի հրապարակման, սոցիալական ցանցերում դրանց լայն տարածման հիմնական նպատակները, այն է՝ Հայաստանի Հանրապետության բնակչության ահաբեկումը և լրացուցիչ տառապանքների պատճառումը, ինչպես նաև սոցիալական ցանցերի օգտատերերի գովասանքին և քաջալերությանն արժանանալը:

24. Ասվածը հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ ադրբեջանական սոցիալական ցանցերում հրապարակումներ են կատարվել զոհված հայ զինծառայողների գտնվելու վայրն իմանալու մասին՝ կոչ անելով զինծառայողների հարազատներին կապվել տվյալ օգտատիրոջ հետ, ինչին հաճախ հաջորդել են զինծառայողի հարազատների կողմից կապի հաստատման փորձերը: Սոցիալական ցանցերի մշտադիտարկումը թույլ է տալիս փաստել, որ նշված օգտատերերը պատասխանել են զոհված կամ գերեվարված զինծառայողների հարազատներին վիրավորական արտահայտությունների օգտագործմամբ, իսկ հարազատների կողմից

իրենց ուղղված հաղորդագրությունները հրապարակվել են հազարավոր հետևորդներ ունեցող տելեգրամյան (Telegram) ալիքներում՝ ծաղրանքի արժանացնելով վերջիններիս, ինչը ևս հետապնդել է հայ հասարակությանը և մասնավորապես՝ զոհված զինծառայողների հարազատներին ահաբեկելու և լրացուցիչ տառապանքներ պատճառելու նպատակ (տես Հավելված 1.16):

25. Անդրադառնալով հայ ռազմագերիների տեսանկարահանմանը և այդ տեսանյութերի հրապարակմանն ու լայն տարածմանը՝ հարկ է նկատել նաև, որ այդպիսով ռազմագերիները բախվում են հանրային հետաքրքրասիրությանը. տեսանյութերի հրապարակմանը հաջորդում են սոցիալական ցանցերի օգտատերերի՝ ռազմագերուն վիրավորող, ատելության խոսք պարունակող թիրախավորումն ու ծաղրանքը: Միաժամանակ, Ժնևյան երրորդ կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ ռազմագերիները պետք է մշտապես օգտվեն պաշտպանությունից, հատկապես բռնության կամ ահաբեկման ամեն տեսակի ակտերից, վիրավորանքից և **հանրային հետաքրքրասիրությունից**:

## 2. Կին զինծառայողների նկատմամբ անմարդկային ու խտրական վերաբերմունքը.

26. Առանձնահատուկ ուշադրության է արժանի կին զինծառայողների մարմինների նկատմամբ անմարդկային վերաբերմունքը փաստող տեսանյութերի լայն տարածումն ադրբեջանական մեդիա հարթակներում ու կնոջ նկատմամբ հնչեցվող վիրավորական, արժանապատվությունը նվաստացնող արտահայտությունները սոցիալական ցանցերի օգտատերերի կողմից: Տեսանյութերի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ կանանց նկատմամբ բռնությունը, նրանց մարմինների խոշտանգումը կատարվել է ոչ միայն ազգային, այլև գենդերային ատելության շարժառիթով:

27. Գենդերային հիմքով բռնությունը բխում է կնոջ նկատմամբ իշխանություն հաստատելու, գենդերային դերերի պարտադրման, ավանդապես «ոչ կանացի» համարվող վարքագիծ (տվյալ դեպքում՝ զինվորական ծառայությունը) դրսևորելու համար պատժելու պահանջից: Այս առումով կարևոր է, որ կին զինծառայողների նկատմամբ հանցավոր արարքներն իրենց բնույթով տարբերվել են տղամարդ զինծառայողների խոշտանգման, նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի

---

[6] Սույն գլխի շրջանակներում ներկայացվող՝ Ադրբեջանական սոցիալական ցանցերում օգտատերերի կողմից տարածվող ատելության խոսքի վերաբերյալ տվյալները հիմնվում են Twitter և Telegram սոցիալական ցանցերի մշտադիտարկման արդյունքում հավաքագրված տեղեկությունների վրա: Հարկ է նշել, որ հատկապես մի քանի տելեգրամյան ալիքներ ամբողջությամբ հեղեղված են հայատյաց և հայերի նկատմամբ բռնություն քարոզող հրապարակումներով և օգտատերերի մեկնաբանություններով: Տես, օրինակ՝ (https://web.telegram.org/k/#@zloy_mamed_1915 / https://web.telegram.org/k/#@aze_patriotlar / https://web.telegram.org/k/#@bez_mas_FACT): Սույն զեկույցի Հավելված 1-ում ներկայացված են նման հրապարակումների որոշ օրինակներ:

դրսևորումներից: Կանանց մարմինները, օրինակ, մերկացվել են, նրանցից մեկի մատները կտրվել են և դրվել բերանում, և այլն: Մանրամասները վերլուծված են Պաշտպանի արտահերթ փակ զեկույցում:

28. Հարկ է նկատել, որ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի թիվ 19-ը ընդհանուր առաջարկությունում նշվում է, որ գենդերային հիմքով բռնությունը կանանց նկատմամբ խտրականության տեսակ է, իսկ թիվ 35 ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ պետությունները պատասխանատվություն են կրում պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից կիրառվող գենդերային հիմքով բռնության համար՝ ինչպես «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի, այնպես էլ ընդհանուր միջազգային իրավունքի (general IL) դրույթները[7]:

29. Թիվ 30 ընդհանուր առաջարկությունում Կոմիտեն փաստում է, որ զինված հակամարտությունները խորացնում են գոյություն ունեցող գենդերային անհավասարությունը՝ գենդերային հիմքով բռնության տարբեր տեսակների առավել բարձր ռիսկի հետևանքով: Կոմիտեն ընդգծում է, որ կին զինծառայողները ևս առավել խոցելի են գենդերային հիմքով բռնության, այդ թվում՝ սեռական բռնության և ոտնձգությունների նկատմամբ: Ուստի, Կոմիտեն առաջարկում է պետություններին արգելել գենդերային հիմքով բռնութան բոլոր դրսևորումները ինչպես պետական մարմնի (State actor), այնպես էլ մասնավոր սուբյեկտների կողմից, ինչպես նաև կանխարգելել, քննել և պատասխանատվության ենթարկել գենդերային հիմքով բռնության բոլոր տեսակների, հատկապես՝ սեռական բռնության կատարման համար:[8]

### 3. Ադրբեջանական լայն հանրության վերաբերմունքը խոշտանգման հրապարակումներին

30. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից սոցիալական ցանցերի մշտադիտարկումը փաստում է, որ հայ զինծառայողների խոշտանգումները և նրանց նկատմամբ դաժան վերաբերմունքը հավաստող տեսանյութերի, զոհված զինծառայողների և քաղաքացիական անձանց մարմինները պատկերող նկարների հրապարակումն արժանանում են ադրբեջանցի օգտատերերի գովաբանությանը և նման վարքագիծը քաջալերող և նորմալացնող արձագանքին:

---

[7] ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ թիվ 35 ընդհանուր առաջարկություն՝ թարմացնող թիվ 19 ընդհանուր առաջարկությունը, կետ 22:

[8] ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, «Կանայք կոնֆլիկտների կանխման, կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում», թիվ 30 ընդհանուր առաջարկություն, կետեր 34, 38, 67:

31. Կարևոր է շեշտել, որ ադրբեջանցի օգտատերերի արձագանքը ներառել է հայերի նկատմամբ նման վարքագիծ դրսևորելու առնչությամբ անթաքույց ուրախության արտահայտում, բռնության կոչեր: Հաճախակի բնույթ է կրել զոհված զինծառայողների մարմինների/մարմինների մասերի հրապարակումն այն ուղեկցող «լավագույն հայը մահացած հայն է» և «լավագույն հայուհին մահացած հայուհին է» գրառումներով: Հատկանշական է, որ այս արտահայտությունը բազմիցս կիրառվել է ադրբեջանցի օգտատերերի կողմից նաև 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում, ինչն արձանագրվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի վերոնշյալ արտահերթ զեկույցներում:

32. Տարածում են ստացել նաև բռնության, այդ թվում՝ հայերի բնաջնջման կոչերը (տես Հավելված 1.3): Հազարավոր հետևորդներ ունեցող տելեգրամյան ալիքներից մեկում մեջբերվել է ադրբեջանական «Ղարաբաղ» ֆուտբոլային ակումբի մամլո խոսնակ Նուրլան Իբրահիմովի՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ին արված հայտարարությունը[9]՝. «Մենք պետք է սպանենք բոլոր հայերին: Երեխային, կնոջը, տարեցին, առանց տարբերության, պետք է սպանել: Ոչ մի խղճահարություն, ոչ մի կարեկցանք: Այժմ ամենակարևորը այդ անասուններից ազատվելն է, հետո ուշ կլինի»:

33. Զոհված հայ զինծառայողների նկարների հրապարակումն ուղեկցվել է նրանց նկատմամբ վիրավորական արտահայտությունների օգտագործմամբ, նրանց «հայ տեռորիստ» կոչելով: Զինծառայողների նկարները հաճախ նաև մոնտաժի են ենթարկվել: Մեկ դեպքում, օրինակ, զինծառայողին ավելացվել են խոզի դունչ և ականջներ, իսկ նկարի վրա գրվել է «ես նույնպես մեռա (я тоже сдох)» (տես Հավելված 1.2):

34. Հատկապես մտահոգիչ է Telegram սոցիալական ցանցում հայ զինծառայողների և քաղաքացիական անձանց խոշտանգված մարմինները և մարմնի մասերը պատկերող ստիկերների (Stickers) ստեղծումը, որոնք լայնորեն ներբեռնվել և օգտագործվել են ադրբեջանցի օգտատերերի կողմից (տես Հավելված 1.4):

35. Անդրադառնալով կին զինծառայողներին առնչվող գրառումներին՝ հարկ է առանձնացել մի քանի հանգամանքներ, որոնք ընդհանուր առմամբ բնորոշ են այդ գրառումների հիմնական մասին: Այսպես, կարևոր է արձանագրել, որ կին զինծառայողների առնչությամբ գրառումները թիրախավորում են ոչ միայն նրանց ազգությունը, այլև առաջին հերթին՝ սեռը և պայմանավորված են ադրբեջանցի օգտատերերի կնատյացությամբ և գենդերային հիմքով նախապաշարմունքներով: Այս թիրախավորումն արտահայտվում է գենդերային կարծրատիպերի տարածմամբ, սեռական հայհոյանքների և այլ վիրավորական արտահայտությունների

---

[9] Հասանելի՝ https://sport.news.am/eng/news/116193/azerbaijan-football-club-representative-we-must-kill-all-armenians.html (դիտված՝ 30.09.2022թ.):

օգտագործմամբ, որոնց հիմքում կնոջ անհատականության ժխտումն է ու կնոջ ընկալումը՝ որպես առաջին հերթին սեռական ցանկությունների բավարարման օբյեկտի:

36. Նկատելի է նաև կնոջ զինծառայող լինելու կարողության մերժումը և դրանից բխող ծաղրը՝ ուղղված ինչպես զինծառայող կանանց, այնպես էլ հայ տղամարդու հավաքական կերպարին՝ «բազմոցին նստելու» և «իր փոխարեն» հայ կանանց մարտի դաշտ ուղարկելու համար: Այլ կերպ ասած, գրառումները հաճախ հիմնվել են նաև այն գաղափարի վրա, որ զինծառայությունը բնորոշ է տղամարդկանց և ինքնին կին զինծառայողների առկայությունն անպատվություն է: Այսպես, օրինակ, հազարավոր հետևորդներ ունեցող էջերում կատարված հրապարակումներում նշվում է, որ «հայ տղամարդիկ նստում են բազմոցին», իսկ կանանց «Յաշման[10] ուղարկում է Աստծո[11] մոտ»: Նույն միտքը տարբեր ձևակերպումներով, այդ թվում՝ կանանց թիրախավորող հայհոյանքների կիրառմամբ, արտահայտվում է նաև այլ գրառումներում:

37. Ադրբեջանցի օգտատերերը ոչ միայն ոգևորություն են հայտնել կին զինծառայողների մարմինների խոշտանգման առնչությամբ, այլ նաև տարածել են այլ հայ կանանց լուսանկարներ, նրանց այլ հրապարակումներ՝ արտահայտելով այդ կանանց նկատմամբ բռնություն, այդ թվում՝ սեռական բռնություն, կիրառելու ցանկություն: Հաճախ այս գրառումներում ցանկալի բռնության նկարագրությունները նույնացել են կին զինծառայողներից մեկի մարմնի կտտանքներին. ադրբեջանցի օգտատերերը, մասնավորապես, հատկապես նշել են կին զինծառայողների մատները կտրելու և դրանք բերանի մեջ դնելու մասին (տես Հավելված 1.5):

38. Սոցիալական ցանցերում տարածում են ստացել ոչ միայն կանանց, այլև երեխաների վերաբերյալ գրառումներ՝ նաև թիրախավորելով աղջիկ երեխաներին՝ գենդերային հիմքով վիրավորական և խտրական բառամթերքի կիրառմամբ (տես Հավելված 1.6):

## 4. Պաշտոնատար անձանց և հասարակական գործիչների հայտարարությունները և ադրբեջանցի երեխաներին ուղղված ատելության քարոզչությունը

39. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից զանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկումները փաստում են, որ Ադրբեջանի պաշտոնատար անձինք և հասարակական գործիչները շարունակում են օգտագործել ծայրահեղ ատելության և հայատյաց հռետորաբանություն՝ խրախուսելով ազգությամբ հայերի նկատմամբ թշնամանք: Սույն թվականի սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի

[10] Ադրբեջանական հատուկ ուժերի անվանակոչում:
[11] Օգտագործվում է «աստված» բառի ռուսերեն տառադարձությունը՝ "Аствац":

խորհրդարանի մի քանի պատգամավորներ և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ սպառնալիքներ և վիրավորանքներ են հնչեցրել հայերի հասցեին՝ այդպիսով արդարացնելով Ադրբեջանի զինված ուժերի կողմից իրականացվող ագրեսիվ գործողությունները[12]:

40. Պետք է նկատել, որ այս հայտարարություններում նկատելի են կրկնվող որոշ ձևակերպումներ և գաղափարներ, որոնցից յուրաքանչյուրը կարևոր է ադրբեջանական հասարակությունում «հայի» հստակ կերպարի և հայկական պետության մասին որոշակի պատկերացումների ստեղծման համար, որոնք կծառայեն որպես համազգային ատելության և թշնամանքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության նկատմամբ ագրեսիայի արդարացման հիմք:

41. Մասնավորապես, քննարկվող հայտարարություններում հայերը ներկայացվում են որպես խորամանկ, երկերեսանի, կեղծավոր, նենգ ազգ, որից ակնկալելի են դավաճանությունն ու ստորությունները: Պաշտոնատար անձինք հաճախ նաև հայերին բնութագրում են որպես բարբարոս կամ վայրենի՝ երբեմն այդպիսով շեշտելով նաև Հայաստանի հետ բանակցությունների անհնարինությունը և ընդգծելով Ադրբեջանի կողմից ուժի կիրառման անխուսափելիությունը:

42. Այսպես, ս.թ. սեպտեմբերի 19-ին իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցության անդամ, Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Մալիաթ Իբրահիմգըզըն, անդրադառնալով Ադրբեջանի դեսպանատների դիմաց հայերի իրականացրած բողոքի ակցիաներին, դրանք որակել է որպես «հայ ֆաշիզմի գործողություններ», բողոքի ակցիայի մասնակիցներին կոչել «հայ վանդալներ» և շեշտել, որ «Պատմության ընթացքում այլ ազգերի և պետությունների գրկում որպես մակաբույծ ապրող հայ ժողովրդի համար դավաճանությունը, կեղծավորությունը, նենգությունը ձևավորվել են որպես ազգային հատկանիշներ»:[13] Սեպտեմբերի 16-ին պատգամավոր Վուգար Իսկանդերովը, խոսելով սեպտեմբերի 13-15-ը տեղի ունեցած ռազմական գործողությունների մասին, հայկական կողմին մեղադրել է կեղծ տեղեկություններ տարածելու մեջ և բնորոշել դա որպես «հայկական պետությանն ու իշխանությանը բնորոշ երկերեսանիություն», ինչպես նաև հայտել, որ «[հայերի] ուղեղն այնքան թունավորված է, որ նրանք ապրում են Մեծ Հայքի ֆանտազիաներով»:[14] Նմանապես, դեռևս սեպտեմբերի 13-ին՝ Ադրբեջանական զինված ուժերի հարձակման օրը, խորհրդարանի պատգամավորներից մեկը՝ Ֆազայիլ Աղամալըն, ոչ միայն հայերին

[12] Հասանելի՝ https://teleqraf.com/news/siyaset/340649.html և https://demokrat.az/az/news/122769/texribatlar-ermenistanin-sonunu-yaxinlasdirir-deputat (դիտված՝ 30.09.2022թ.):
[13] Հասանելի՝ https://bakivaxti.az/ru/posts/detail/ermeniler-hemise-basqa-xalqlarin-qoltugunda-parazit-kimi-yasayib-deputat-1663573268 (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.:
[14] Հասանելի՝ https://azpolitika.info/?p=688741 (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.:

անվանել է «բարբարոս, ֆաշիստական ցեղ», այլև աներկբա կոչ է արել վերացնել Հայաստանը՝ որպես պետություն[15]:

43. Իշխող խմբակցության մեկ այլ պատգամավոր՝ Էլման Մամադովը, շեշտելով ռազմական ուժի կիրառման անհրաժեշտությունը, նշել է. «Ադրբեջանը (...) կստիպի հայերին գնալ խաղաղության՝ կիրառելով իր ռազմական ուժը: Հայերը, որպես նորմալ հասարակություն, որպես ազգ, խոսք չեն հասկանում, խաղաղության չեն գալիս:»:[16] Նմանապես, Ադրբեջանի խորհրդարանի Պաշտպանության անվտանգության և հակակոռուպցիոն հանձնաժողովի նախագահ Զիյաֆաթ Ասգերովը նշել է, որ «Միևնույն ժամանակ, հայկական կողմը ևս մեկ անգամ ապացուցեց, որ իրենց հետ քաղաքական, դիվանագիտական ճանապարհով խոսելն իմաստ չունի: Կարծես, նրանք Ադրբեջանի Երկաթե Բռունցքի հարվածն են ընտրել: Ուստի այսուհետ կխոսվի միայն նրանց հասկանալի լեզվով:»:[17]

44. Սպառնալիքներ են հնչեցվել նաև որոշ հասարակական գործիչների կողմից: Այսպես, օրինակ, Ադրբեջանի «Ազգային անկախություն կուսակցության առաջնորդ» Էթիբար Մամեդովը ս.թ. սեպտեմբերի 20-ին տված հարցազրույցում նշում է, որ եթե Հայաստանը հրաժարվի միջանցք տալուց, իրենք պետք է փակեն Ստեփանակերտը ՀՀ-ին կապող ճանապարհը՝ այդպիսով կոչ անելով զրկել արցախաբնակ հայերին կենսական նշանակություն ունեցող ճանապարհից՝ գցելով նրանց լիակատար շրջափակման մեջ:[18]

45. Հարկ է նկատել նաև, որ անձին «հայ» կոչելը կամ նրա գաղափարները «հայամետության» հետ ասոցացնելն Ադրբեջանում ընկալվում են որպես վիրավորանք: Այսպես, պատգամավոր Ագիյե Նախաչըվանլըն սեպտեմբերի 16-ին, անդրադառնալով սեպտեմբերի 13-ին ադրբեջանական զինված ուժերի հարձակման առնչությամբ ընդդիմադիր որոշ գործիչների հայտարարություններին, նշել է, որ «իրենց հայամետ ուժերի հետ մի շարքի դասող մարդկանց մտքերն ու կարծիքները չեն կարող որևէ նշանակություն ունենալ Ադրբեջանի ժողովրդի համար»:[19] Նմանապես, սեպտեմբերի 15-ին, Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր, իշխող կուսակցության անդամ Թահիր Ռզաևը, քննադատելով ընդդիմադիր գործիչներին, նրանց համեմատել է «արյունարբու հայերի» հետ:[20]

46. Ադրբեջանական պաշտոնատար անձանց հայատյաց հռետորաբանությունն առկա է եղել նաև ս.թ. սեպտեմբերի 13-ի հարձակմանը նախորդող

---

[15] Հասանելի՝ https://www.bakupost.az/qisasa-benzer-antiterror-emeliyyati-aparilmalidir-deputat (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.:
[16] Հասանելի՝ https://pravda.az/news/92392 (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.:
[17] Հասանելի՝ https://teleqraf.com/news/siyaset/340649.html (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.:
[18] Հասանելի՝ https://azpolitika.info/?p=689132 (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.:
[19] Հասանելի՝ https://azertag.az/xeber/2294177 (ադրբեջաներեն, դիտված՝ 30.09.2022թ.):
[20] Հասանելի՝ https://demokrat.az/az/news/123145/deputat-coreyimizi-yeyib-suyumuzu-icenlerin-nadanligi-hamimizi-teessuflendirir (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.:

ժամանակաշրջանում: Այսպես, սեպտեմբերի 8-ին իշխող կուսակցության անդամ, պատգամավոր Էլշադ Միրբաշիրօղլուն նշել է, որ հայերը «անուղղերի վայրենի ժողովուրդ են», որոնց հետ խաղաղ ապրելը «դժվար ու վտանգավոր» է: Հաջորդիվ նա նշել է նաև. «Պետք է թշնամուն սրանից հետո շատ թույլ դիրքում պահենք, որ ընդհանրապես գլուխը բարձրացնելու հնարավորություն չունենա:»:[21] Նմանապես, մեկ այլ պատգամավոր՝ Անար Իսգանդերովը սեպտեմբերի 8-ին ոչ միայն նշել է, որ հայ ազգը, «Հայաստան պետությունը խորթ են այս տարածքին, այս տարածքի տերը չեն, եկվոր են» և որ Հայաստանը «չպետք է մնա պատմության մեջ»՝ այսպիսով փաստացի կոչ անելով ոչնչացնել հայկական պետությունը, այլ նաև հայերին կոչել է «դաժան, անխիղճ, ֆաշիստից ֆաշիստ», ողորմություն և արդարություն չունեցող:[22]

47. Ուժի կիրառման կոչեր են հնչեցվել նաև որոշ հասարակական գործիչների կողմից: Այսպես, «Ազատ դեմոկրատներ» կուսակցության ղեկավար Սուլհեդին Աքբարը նշել է, որ անհրաժեշտ է ձեռնարկել նոր «հակաահաբեկչական գործողություն»՝ վերահսկողության տակ վերցնելու համար Լաչինի և Քելբաջարի շրջագծի բարձրունքները:[23] «Հակաահաբեկչական գործողության» անհարժեշտության մասին է խոսել նաև ռազմական փորձագետ Ազադ Իսազադեն՝ նշելով, որ այդպիսով ՀՀ վարչապետն ավելի արագ «կգա խաղաղության»:[24]

48. Ատելություն և անհանդուրժողականություն հրահրող, ինչպես նաև Հայկական պետականության ոչնչացումը քարոզող նման արտահայտությունների ազատ և անպատիժ առկայությունն Ադրբեջանական հանրային խոսույթում, հատկապես՝ պաշտոնատար անձանց կողմից, վկայում է այն մասին, որ հայատյացությունն այս պետությունում խրախուսվում և սնուցվում է իշխանությունների կողմից՝ առավելապես տարածվելով և հովանավորվելով բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից:

49. Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ իրենց հայտարարություններում ադրբեջանական պաշտոնյաները հաճախ օգտագործում են Ադրբեջանի նախագահի արտահայտությունները, կրկնում նրա կողմից առաջ քաշված թեզերը: Այս առումով հատկանշական է, որ այդ պաշտոնյաներից շատերն իրենց ելույթներում նշում են Ադրբեջանի նախագահի կողմից հաճախ վկայակոչվող «երկաթե բռունցքի» մասին:[25] Այս արտահայտությունը բազմիցս օգտագործվել է Ի. Ալիևի կողմից դեռևս 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո՝ լայն տարածում ստանալով ադրբեջանական հասարակությունում և սովորաբար խորհրդանշում է

---

[21] Հասանելի՝ https://pravda.az/news/92059 (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.:
[22] Հասանելի՝ https://demokrat.az/az/news/122223/ermeniler-yuz-iller-boyu-insanlarin-qebirlerini-goresenler-kimi-esibler-deputat (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.:
[23] Հասանելի՝ https://teleqraf.com/news/qarabagh/340112.html (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.
[24] Հասանելի՝ https://reyting.az/slayd/87556-qarabagda-anti-terror-emeliyyati-kecirile-biler.html (ադրբեջաներեն),, տես նաև՝ https://turaztv.az/xeberler/23663-vacb-qarabada-qisas-2-mliyyat-balanr-aiqlama.html (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.:
[25] Տես, օրինակ՝ https://pravda.az/news/92392, https://teleqraf.com/news/siyaset/340649.html (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.:

Ադրբեջանական զինված ուժերի հարձակումը կամ օգտագործվում որպես ուժի գործադրման սպառնալիք: Այսպես, օրինակ, ս.թ. ապրիլի 22-ին Ադրբեջանի նախագահը հայտարարել է. «Վերջապես [Ադրբեջանի ժողովուրդը] «երկաթե բռունցքով» փշրել է թշնամու գլուխը, վերականգնել պատմական արդարությունն ու ազգային արժանապատվությունը»:[26]

50. Հատկանշական է նաև, որ պաշտոնատար անձինք և հասարակական գործիչները ՀՀ իշխանությունների, զինված ուժերի, և նույնիսկ քաղաքացիական անձանց գործողությունների մասին իրենց խոսքում օգտագործում են «հայկական ֆաշիզմ» արտահայտությունը: Հայաստանի Հանրապետության՝ «ֆաշիստական պետություն» լինելու գաղափարը բազմիցս արտահայտվել է Ադրբեջանի նախագահի կողմից, և հիմնվում է վերջինիս կողմից արվող այն պնդման վրա, որ ՀՀ ներկայիս տարածքը «պատմական ադրբեջանական հողերի» վրա է կառուցված: Ադրբեջանի նախագահի՝ տարիների ընթացքում կատարած հայտարարությունների և հարցազրույցների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ վերջինս այս արտահայտությունն օգտագործելով ստեղծել է Ադբեջանի կողմից «հայկական ֆաշիզմի» դեմ պայքարելու կեղծ պատմույթը՝ այդպիսով, ի թիվս այլնի, արդարացնելով Հայաստանի Հանրապետության և Արցախի հայերի նկատմամբ ուժի գործադրումը[27]:

51. Անդրադառնալով Ադրբեջանի նախագահի կողմից տարածվող ատելության խոսքին՝ հարկ է նկատել նաև, որ արժանապատվությունը նվաստացնող և անհանդուրժողականություն հրահրող արտահայտությունների հետ մեկտեղ վերջինս իր խոսքում հաճախ օգտագործում է Հայաստանի բնակչության ահաբեկմանն ուղղված և ուժի կիրառման սպառնալիք պարունակող արտահայտություններ, ուղղակիորեն հաստատում Ադրբեջանի կողմից ուժի կիրառումը՝ գովասանքով խոսելով այս մասին: Այսպես, օրինակ, ս.թ. սեպտեմբերի 21-ին Լաչինի շրջան այցի ընթացքում Ի. Ալիևը նշել է, որ Հայաստանը պետք է զգուշավոր լինի և որ «ոչինչ և ոչ

[26] Տես Իլհամ Ալիևի ելույթը Շուշիում անցկացվող «Աշխարհի ադրբեջանցիների հինգերորդ համագումարին», 2022 թվականի ապրիլի 22, հասանելի՝ https://president.az/az/articles/view/55859 (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ., տես նաև՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությունը, «Բի-Բի-Սի Մոնիթորինգ», 10.09.2020թ., հասանելի՝ https://twitter.com/bbcmonitoring/status/1326064785885192194 (անգլերեն), դիտված՝ 16.09.2022թ.:

[27] «(...) Հայկական ֆաշիզմն ամենատգեղն ու ամենադաժանն է բոլոր գոյություն ունեցածներից: Այս պատերազմում, մենք ոչ միայն վերականգնել ենք մեր տարածքային ամբողջականությունը, այլ նաև ոչնչացրել ենք հայկական ֆաշիզմը: Սա պատմական առաքելություն է, որը մենք կատարել ենք ոչ միայն Ադրբեջանի ժողովրդի, այլ ամբողջ աշխարհի համար: Հայկական ֆաշիզմը ոչնչացվել է: Այն ոչնչացվել է Ադրբեջանի ժողովրդի կողմից: Եթե այսօր Հայաստանում որոշ վրեժխնդիր ուժեր բարձրացնեն իրենց գլուխը, նրանք պետք է իմանան, որ եթե անհրաժեշտ լինի, մենք ցանկացած պահի կփշրենք նրանց գլուխները: Մենք չենք կարող թույլ տալ հայկական ֆաշիզմին կրկին բարձրացնելու իր գլուխը:», «Նախագահ Իլհամ Ալիևի հարցազրույցն ադրբեջական հեռուստատեսությանը», 2021 թվականի ապրիլի 21, հասանելի՝ https://apa.az/en/xeber/domestic-news/President-Ilham-Aliyev-interviewed-by-Azerbaijan-Television-colorredUPDATEDcolor-347302 (անգլերեն), դիտված՝ 30.09.2022թ.:
Տես նաև, օրինակ՝ «Մենք պետք է ապահովենք, որ հայկական ֆաշիզմը երբեք կրկին չծագի», 2022 թվականի հունվարի 31, հասանելի՝ https://news.az/news/we-must-ensure-that-armenian-fascism-never-arises-again-azerbaijani-president (անգլերեն), դիտված՝ 30.09.2022թ.:

ոք չի կարող կանգնեցնել» Ադրբեջանին՝ աներկբայորեն սպառնալով ուժի գործադրմամբ, ինչպես նաև հայտնել. «Մենք ուժով ազատագրել ենք մեր հողը և հպարտ ենք դրանով»: Ադրբեջանի նախագահն անդրադարձել է նաև Ադրբեջանի կողմից ՀՀ ինքնիշխան տարածքի վրա հարձակմանը՝ արդարացնելով դա սահմանազատման և սահմանագծման բացակայությամբ՝ նշելով. «Նրանք [հայերը] այն տպավորության տակ էին, որ Ղարաբաղն ու Զանգեզուրը (խոսքը գնում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի մասին՝ *խմբագրի նշում*) կմնան իրենց, այդ պատճառով ոչինչ չեն արել ադրբեջանահայկական սահմանին: Այս խոսքերով, սահմանագծման բացակայության պայմաններում ոչ ոք չի կարող պնդել՝ որտեղով է սահմանն անցնում:»:[28]

52. Ս.թ. սեպտեմբերի 27-ին՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականին սանձազերծած պատերազմի 2-րդ տարելիցին, Իլհամ Ալիևը կրկին հպարտությամբ հաստատել է Ադրբեջանի զինված ուժերի կողմից 2020 թվականին ուժի կիրառումը, նշելով, որ իրենք «վրեժը լուծեցին մարտի դաշտում»: Նա նշել է, որ Ադրբեջանի ժողովուրդը համախմբվեց «բռունցքի նման» և «թշնամուն վռնդեց հայրենի հողից»: Այս անգամ ևս, Ադրբեջանի նախագահի ելույթը պարունակել է ուժի կիրառման սպառնալիք, մասնավորապես, վերջինս նշել է. «Չենք թողնելու, որ թշնամին մեկ անգամ էլ գլուխը բարձրացնի, չենք թողնելու, որ մեզ համար մեկ անգամ էլ սպառնալիք ստեղծի: Եթե տեսնենք, անմիջապես կգործենք: (...) մեր երկրի աճող ուժը, այդ թվում՝ ռազմական հզորությունը, մեր անկախության և հարմարավետ կյանքի ապահովողն է, նրա երաշխավորն է:»:[29]

53. Անդրադառնալով երեխաներին ուղղված ատելության քարոզչությանը՝ հարկ է նկատել, որ ադրբեջանական դպրոցական դասագրքերի ուսումնասիրության հիման վրա Պաշտպանն իր զեկույցներում արդեն իսկ արձանագրել է, որ հայատյացության քարոզը խորապես ներդրված է ադրբեջանական ուսումնական գործընթացում, ինչի արդյունքում երեխաների մեջ հայերի նկատմամբ ատելություն է սերմանում նրանց վաղ մանկությունից:[30] Այս առումով առանձնակի ուշադրության է արժանի սոցիալական ցանցերում տարածում ստացած, ինչպես նաև Ադրբեջանի նախագահին առընթեր՝ հասարակական կազմակերպություններին աջակցության խորհրդի մամուլի քարտուղարի կողմից Թվիթեր (Twitter) սոցիալական ցանցում հրապարակված տեսանյութը[31], որում Ադրբեջանի Սումգայիթ քաղաքի դպրոցներից մեկի բակում դպրոցական տարիքի երեխաները կրկնում են ենթադրաբար ուսուցչի

---

[28] Հասանելի՝ https://apa.az/en/official-news/president-ilham-aliyev-raised-azerbaijani-flag-in-city-of-lachin-updated-385315 (անգլերեն), դիտված՝ 30.09.2022թ.:

[29] Հասանելի՝ https://president.az/az/articles/view/57387 (ադրբեջաներեն), դիտված՝ 28.09.2022թ.:

[30] Հասանելի՝ https://ombuds.am/images/files/3101f60c869b0f378dbc737b002e5054.pdf (անգլերեն):

[31] Տեսանյութը հասանելի՝ https://twitter.com/ElmeddinBehbud/status/1573667212480618496 (դիտված՝ 30.09.2022թ.):

կողմից հնչեցվող բառերը և շարունակում նրա նախադասությունները: Ուսուցչի և աշակերտների միջև, մասնավորապես, տեղի է ունենում հետևյալ փոխանակումը.

«ՈՒՍՈՒՑԻՉ: - Ողջու՜յն թանկագին զինվոր:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐ: - Ողջույն:

ՈՒՍ: Հայրենիքին...

ԱՇ: - ծառայություն:

ՈՒՍ: - Ժողովրդին...

ԱՇ: - հավատարմություն:

ՈՒՍ: - Թշնամուն...

ԱՇ: - ատելություն, ատելություն, ատելություն:

ՈՒՍ: - Հայրենիքի ծառայությանը պատրա՞ստ եղիր:

ԱՇ: - Պատրաստ եմ:

ՈՒՍ: Ղարաբաղը...

ԱՇ: - Ադրբեջան է:

ՈՒՍ: Ղարաբաղը...

ԱՇ: - Ադրբեջան է:

ՈՒՍ: - Ապրեք/Բրավո:

ԱՇ: - Շնորհակալություն:»:

54. Տեսանյութի կապակցությամբ հատկապես ուշադրության են արժանի մի քանի հանգամանքներ: Նախ, ինչպես ուսուցչի, այնպես էլ երեխաների արտահայտություններն ուղղված են երեխաների մոտ սեփական անձի՝ որպես զինվորի կամ մարտիկի ընկալումը ձևավորելուն: Այսպես, ուսուցիչը երեխաներին ողջունում է՝ կոչելով նրանց «թանկագին զինվոր», հրամայում է պատրաստ լինել հայրենիքին ծառայությանը, որպիսի պատրաստակամությունը հաստատվում է երեխաների կողմից: Բացի այդ, ինքնին շարայունով զգաստ կանգնած լինելը կարող է ամրապնդել երեխայի՝ սեփական անձը տվյալ իրավիճակում զինծառայողի կարգավիճակում պատկերացնելու կարողությունը կամ ընկալումը:

55. Երկրորդը, կարևոր է, որ հայրենիքին ծառայության և ժողովրդին հավատարմության վերաբերյալ հավաստումները զուգորդվում են թշնամու նկատմամբ ատելության կոչով, իսկ «Ղարաբաղն Ադրբեջան է» կրկնվող գոյնունը հաստատում է թշնամու ինքնությունը: Երեխաներն այսպիսով վաղ հասակից պատրաստ են լինում «ծառայելու հայրենիքին» և ասոցացնում են այդ ծառայությունը զինվորի կարգավիճակի ու հայերի նկատմամբ ատելության հետ: Ադրբեջանական սոցիալական ցանցերում այս տեսանյութը ևս արժանացել է գովասանքի և ոգևորության (տես Հավելված 1.7):

56. Հատկանշական է նաև, որ տեսանյութում հնչող արտահայտությունը («Հայրենիքին՝ ծառայություն: Ժողովրդին՝ հավատարմություն: Թշնամուն՝ ատելություն, ատելություն, ատելություն:») կրկնվում է նաև ադրբեջանցի զինծառայողների կողմից՝ նրանց տարածած տեսանյութերում[32], ինչը ևս վկայում է Ադրբեջանի հայատյաց քաղաքականության արդյունավետության, ինչպես նաև այդ քաղաքականության և զինծառայողների վարքագծի միջև ուղղակի կապի մասին:

57. Այս համատեքստում պետք է նկատել, որ Ադրբեջանի կողմից վարվող հայատյաց քաղաքականության մասին անթաքույց նշում են հենց Ադրբեջանական պաշտոնատար անձինք: Այսպես, օրինակ, Ի. Ալիևը, ս.թ. ապրիլի 30-ի իր ելույթում նշել է. «Ի՞նչն էր մեզ առաջ մղում: Հայրենասիրությունը, հայրենիքի նկատմամբ սերը, թշնամու նկատմամբ ատելությունը: Ահա, այս ոգով ենք դաստիարակել երիտասարդ սերնդին, այս ոգով է մեծացել մեր բանակը, և մեր բանակի ամենամարտունակ միավորումը հանդիսացող հատուկ ջոկատայինները այս գաղափարով էին առաջ գնում, իրենց կուրծքն առաջ տանում»:[33]

58. Ադրբեջանի բարձրաստիճան պաշտոնյաների նման հայատյաց հռետորաբանությունը, որը ընդունելի է դարձնում և անգամ գովաբանում է հայերի նկատմամբ բռնությունը, ադրբեջանցի զինծառայողների կողմից հայ ռազմագերիների նկատմամբ անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորումների խորքային պատճառներից մեկն է: Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության՝ դեռևս 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո իրականացրած դիտարկումները ցույց են տվել, որ հայ ռազմագերիների և այլ պահվող անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի դրսևորումների ցուցադրումը լայն հասարակությանը հանրային բարձր գովասանքի է արժանանում սոցիալական ցանցերում: Ավելին, այդ նույն ժամանակահատվածում շատ ադրբեջանցի զինծառայողներ, հայերի նկատմամբ վայրագություններ կատարելիս, կիրառել են Ադրբեջանի նախագահի հնչեցրած նույն բառերն ու արտահայտությունները:[34]

## 5. Սահմանամերձ բնակավայրերի բնակչության ահաբեկումը՝ որպես հայատյաց քաղաքականության դրսևորում.

[32] Տես, օրինակ՝ https://twitter.com/skyblue_95_/status/1461027833858379787 (դիտված՝ 30.09.2022թ):
[33] Հասանելի՝ https://president.az/az/articles/view/55917 (ադրբեջաներեն), դիտված՝ 30.09.2022թ.
[34] Արտահերթ հրապարակային զեկույց «Հայերի նկատմամբ ատելության և թշնամանքի ադրբեջանական քաղաքականությունը՝ որպես էթնիկ ծագման հիմքով ատելության շարժառիթով կատարված՝ մարդու իրավունքների խախտումների խորքային պատճառ: Հետպատերազմյան զարգացումների փաստարկված վերլուծություն», Մարդու իրավունքների պաշտպան, Երևան, 2022թ., հասանելի՝ https://ombuds.am/images/files/3101f60c869b0f378dbc737b002e5054.pdf (անգլերեն), դիտված՝ 16.09.2022թ.:

59. Ինչպես արդեն նշվեց սույն զեկույցում, Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունն իր հստակ արտահայտումն է ստանում Ադրբեջանական զինված ուժերի գործողություններում: Այս առումով առավել համապարփակ պատկերը ներկայացնելու նպատակով կարևոր է անդրադառնալ Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանամերձ բնակավայրերի անմիջական հարևանությամբ տեղակայված Ադրբեջանական զինված ուժերի գործողություններին, որոնց վերաբերյալ տվյալները հավաքագրվել են 2022 թվականի հուլիսից օգոստոս ամիսների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խմբերի՝ Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա, Ներքին Շորժա, Նորաբակ, Կութ, Սոթք բնակավայրեր և Տավուշի մարզի Ազատամուտ, Բաղանիս, Կիրանց, Ոսկեպար, Ներքին Կարմիրաղբյուր, Նորաշեն, Մովսես, Այգեպար, Չինարի, Այգեձոր, Արծվաբերդ, Չորաթան, Բերքաբեր, Բարեկամավան, Սարիգյուղ, Կոթ բնակավայրեր կատարված այցերի և փաստահավաք աշխատանքների արդյունքում:[35]

60. Այսպես, կատարված փաստահավաք աշխատանքների արդյունքում պարզվել է, որ ադրբեջանական զինծառայողները ժամանակ առ ժամանակ կիրառում են տարբեր տրամաչափի զենք, որը պարզ լսելի է բնակավայրերում: Որոշ դեպքերում ադրբեջանական զինծառայողների կրակոցներն ուղղվել են արոտավայրերում գտնվող կենդանիների ուղղությամբ, գրանցվել են դեպքեր, երբ կենդանիները սատկել են կրակոցների հետևանքով:

61. Բացի այդ, որոշ հողատարածքներ բնակիչների կողմից չեն օգտագործվում, քանի որ նշանառության տակ են ու մարդկանց մոտենալու դեպքում ադրբեջանական զինծառայողները կրակոցներ են արձակում՝ գյուղատնտեսական աշխատանքները համարելով ինժեներական աշխատանք: Բնակիչների կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ ադրբեջանական զինծառայողները նաև զենքի ցուցադրման միջոցով սպառնալիքներ են ներկայացնում գյուղացիներին:

62. Ավելին, Գեղարքունիքի մարզի գրեթե բոլոր համայնքներում մարդիկ նշել են, որ գիշերային ժամերին ադրբեջանական զինված ուժերը հեռահար ուժեղ լույսեր են միացնում գյուղացիների տների պատուհանների ուղղությամբ՝ վերջիններիս նկատմամբ հոգեբանական ճնշում գործադրելու, նրանց մոտ լարվածության մշտական վիճակ առաջացնելու նպատակով: Ըստ բնակիչների՝ ադրբեջանցի զինծառայողները հրդեհած անիվներն իրենց դիրքերի բարձրությունից մեծ ուժով նետում են հավաքած խոտի և արոտավայրի ուղղությամբ՝ միտումնավոր այրելով ու

---

[35] Տես «Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ամփոփվել են 2022 թվականի հուլիսի 25-28-ը Տավուշի մարզ իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքները», հասանելի՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2315 (դիտված՝ 30.09.2022թ.), տես նաև՝ «Քրիստիննե Գրիգորյանն օգոստոսի 2-ին փաստահավաք այց է իրականացրել Գեղարքունիքի մարզի մի շարք սահմանամերձ համայնքներ», հասանելի՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2312 (դիտված՝ 30.09.2022թ):

հրդեհելով արոտավայրերը: Ընդ որում, այս վարքագիծը կրել է շարունակական բնույթ և կրկնվել է նաև փաստահավաք աշխատանքների ավարտից հետո՝ ս.թ. սեպտեմբերի 1-ին, 2-ին և 3-ին՝ Վարդենիս համայնքի սահմանամերձ Նորաբակ և Ներքին Շորժա բնակավայրերի մոտակա սարերում: Բնակչության նկատմամբ հոգեբանական ճնշում է գործադրվում նաև անօդաչու թռչող սարքերի մշտական ներկայությունն ու լսելի ձայնը իրենց բնակավայրերին մոտ տարածքներում:

63. Նկարագրված գործողությունների շարունակական և պարբերական բնույթը, դրանց համատարած կատարումը սահմանամերձ տարբեր համայնքներում և բնակավայրերում, ինչպես նաև այս արարքների դիտարկումը Ադրբեջանական պաշտոնատար անձանց՝ ատելության քարոզչություն պարունակող հայտարարությունների, ս.թ. սեպտեմբերի 13-15-ը Ադրբեջանական զինված ուժերի գործողությունների համատեքստում թույլ են տալիս եզրակացնել, որ այս գործողությունները պատահական չեն, կատարվում են Ադրբեջանի ռազմական ղեկավարության ուղղորդմամբ և/կամ իմացությամբ ու թողտվությամբ և նպատակ են հետապնդում ահաբեկելու Հայաստանի սահմանամերձ համայնքների բնակիչներին, նրանց շրջանում տագնապ տարածելու և որպես վերջնանպատակ՝ սահմանամերձ բնակավայրերը հայաթափելու: Ադրբեջանական զինված ուժերի այս գործողություններն, այսպիսով, մի մասն են Հայաստանի բնակչության ահաբեկմանն ուղղված, պետական մակարդակում վարվող հայատյաց քաղաքականության, որն իր մարմնացումն է ստանում նաև սույն զեկույցում ներկայացված այլ գործողությունների՝ մասնավորապես, օրինակ՝ հայ զինծառայողների խոշտանգման և նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի, ինպես նաև այդ խոշտանգումը փաստող տեսանյութերի լայն տարածման տեսքով:

64. Հարկ է արձանագրել, որ Ադրբեջանի զինված ուժերի այս գործողությունները կոպտորեն խախտում են սահմանամերձ բնակչության բավարար կենսամակարդակի իրավունքը, ինչպես նաև նրանց ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը: Այսպես, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) 11-րդ հոդվածի համաձայն՝ դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի և նրա ընտանիքի համար բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որն իր մեջ ներառում է բավարար սնունդ, հագուստ ու բնակարան և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը: Այս առումով հատկանշական է, որ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովը, թիվ 4 ընդհանուր մեկնաբանությունների շրջանակներում անդրադառնալով բավարար կենսամակարդակի բաղադրատարր հանդիսացող բնակարանի իրավունքին,

արձանագրել է. «Բնակարան ունենալու իրավունքը (...) պետք է դիտվի որպես ինչ-որ տեղ **ապահով, խաղաղ և արժանապատիվ ապրելու իրավունք**»:[36]

65. Բացի այդ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորվում է յուրաքանչյուր անձի՝ անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը, որը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ ներառում է նաև անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը:[37] Այս համատեքստում հարկ է նկատել, որ պետությունները կրում են նեգատիվ պարտավորություն՝ չձեռնարկելու այնպիսի միջոցներ, որոնք ապօրինի կմիջամտեն Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների իրացմանը:

## IV. ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

### 1. Տեղահանված անձինք, ռազմական ակտիվ գոտիներից չտարհանված առավել խոցելի անձինք

66. Պաշտպանի աշխատակազմի փաստահավաք աշխատանքների արդյունքներով արձանագրվել է Սեպտեմբերի 13-ից 15-ը Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերից տեղահանվել է առնվազն 7600 անձ: Տեղահանված անձանց շրջանում մեծամասնություն են կազմում կանայք, ծերեր, երեխաներ և հաշմանդամություն ունեցող անձինք, որոնցից՝ 1437 երեխա և 99 հաշմանդամություն ունեցող անձ: Նշված անձանց գերակշիռ մեծամասնությունը սույն զեկույցի հրապարակման պահին դեռևս չի վերադարձել՝ առաջին հերթին հրադադարի հաճախակի ու վտանգավոր խախտումների, ինչպես նաև շատերի դեպքում տների հիմնովին ավերման պատճառներով:

---

[36] Տե՛ս ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հանձնաժողովի թիվ 4 ընդհանուր մեկնաբանություններ, պար. 7:

[37] Տե՛ս, օրինակ՝ Բուտուրգան ընդդեմ Ռումինիայի գործով (Buturugă V. Romania) 2020 թվականի փետրվարի 11-ի վճիռը, դիմում թիվ 56867/15, Վավրիցկան և այլոք ընդդեմ Չեխիայի Հանրապետության գործով (Vavřička and Others v. The Czech Republic) 2021 ապրիլի 8-ի վճիռը, դիմում թիվ 47621/13:




67. Ի հավելումն փաստահավաք աշխատանքների, Մարդու իրավունքների պաշտպանը, իր լիազորությունների շրջանակում, շարունակում է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել՝ պաշտպանելու և վերականգնելու տեղահանված անձանց ոտնահարված իրավունքները, ովքեր ստիպված են եղել հեռանալ կամ տարհանվել իրենց սահմանամերձ բնակավայրերից ադրբեջանական զինուժի կողմից համայնքների ուղիղ թիրախավորման հետևանքով:

68. Պաշտպանի աշխատակազմը քարտեզագրել է այն տարածքները/համայնքները, որտեղ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձինք չեն տարհանվել իրենց տներից և մնացել են ակտիվ հրետակոծության գոտիներում: Քարտեզագրումն իրականացվել է համայնքների ղեկավարների և տեղական ինքնակառավարման մարմինների ու այլ դերակատարների հետ քննարկումների հիման վրա: Հավաքագրված տեղեկատվությունը փոխանցվել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեին և պետական իրավասու մարմիններին:

69. Պաշտպանի աշխատակազմի անցկացրած անհատական հարցազրույցների, ինչպես նաև Սոթք համայնքի ղեկավարի կողմից վերահաստատված տեղեկության համաձայն, պարզ է դարձել, որ Ադրբեջանի զինված հարձակման ընթացքում 2 տարեց կնոջ, որոնցից մեկը հաշմանդամություն ունեցող անձ է, ինչպես նաև մեկ տղամարդու չի հաջողվել տարհանել և վերջիններս մնացել են Սոթք գյուղում սեպտեմբերի 13-14-ին՝ Ադրբեջանի կողմից անդադար արձակվող հարվածների տակ:

70. Հարկ է ընդգծել, որ տեղահանված անձինք օգտվում են մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային պայմանագրերով երաշխավորված բոլոր իրավունքներից, և կառավարությունները պարտավոր են երաշխավորել այդ իրավունքների իրացումը: Մարդու իրավունքների միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի անկյունաքարային դրույթներն արտացոլող 1998 թվականի Ներքին տեղահանման վերաբերյալ ուղղորդող սկզբունքների[38] շրջանակներում պետությունների համար սահմանվում է հստակ ընթացակարգ՝ ապահովելու ներքին տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությունը և իրացումը, ներառյալ՝ բավարար ապաստանի, արժանապատվության, ֆիզիկական, մտավոր և բարոյական անձեռնմխելիության, անվտանգության և այլ իրավունքներ:

**2. Բժշկական շտապօգնության մեքենաների ու լրագրողների թիրախավորում**




71. Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք առաքելության արդյունքում հավաքագրված տեղեկության համաձայն՝ սեպտեմբերի 13-ին Սյունիքի մարզում, Ճակատենի հատվածում ադրբեջանական զինված ուժերը թիրախավորել և խոցել են շտապօգնության տարբերանշանը կրող երկու մեքենա, որոնցից մեկը ադրբեջանական զինված ուժերի կրակոցից խափանվել է և թողնվել նույն տեղում: Շտապօգնության մեքենաներից մեկի անձնակազմին հաջողվել է ժամանակին լքել մեքենան[39]: Միաժամանակ, մյուս մեքենայի վարորդը, Պաշտպանի աշխատակազմում ստացված տեղեկության համաձայն, զոհվել է:

72. Բժշկական օգնության համար նախատեսված տրանսպորտային միջոցների թիրախավորումն արգելված է ինչպես սովորութային միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով, այնպես էլ 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաներով: Համաձայն «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին» Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի» կոնվենցիայի (այսուհետ՝ Ժնևի առաջին կոնվենցիա) 35-րդ հոդվածի 1-ին պարբերության վիրավորներ և հիվանդներ փոխադրող կամ բժշկական գույքով բեռնավորված փոխադրամիջոցները հովանավորությունից և պաշտպանությունից օգտվում են նույն

[38] Հասանելի՝ https://www.unhcr.org/43ce1cff2.pdf

[39] «Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը հավաքագրում է սեպտեմբերի 13-ին ադրբեջանական զինված ուժերի կողմից Հայաստանի նկատմամբ սկսած ագրեսիայի ընթացքում քաղաքացիական ենթակառուցվածքների թիրախավորման ապացույցները», Մարդու իրավունքների պաշտպան, 13.09.2022թ., հասանելի՝ https://ombuds.am/am/site/ViewNews/2341 (դիտված՝ 15.09.2022թ)

հիմունքներով, ինչ շարժական բժշկական կազմավորումները: Այս դրույթը կիրառելի է զինվորական բժշկական տրանսպորտային միջոցների նկատմամբ, միաժամանակ, բժշկական փոխադրամիջոցների պաշտպանության շրջանակն ընդլայնվել է «Միջազգային զինված կոնֆլիկտների զոհերի պաշտպանության վերաբերյալ» Ժնևի 1949 թվականի օգոստոսի 12-ի կոնվենցիաներին կից Ժնևի 1977 թվականի լրացուցիչ թիվ 1 արձանագրության (Այսուհետ՝ թիվ 1 լրացուցիչ արձանագրություն) 8-րդ հոդվածի «է-թ» կետերով և 21-րդ հոդվածով:

73. Մասնավորապես, 21-րդ հոդվածի համաձայն՝ ցամաքային սանիտարա-տրանսպորտային միջոցներն օգտվում են նույնպիսի հարգանքից և պաշտպանությունից, ինչպես որ շարժական բժշկական կազմավորումները՝ կոնվենցիաներին և սույն Արձանագրությանը համապատասխան, իսկ 8-րդ հոդվածի ը) կետով բժշկական տրանսպորտային միջոցները բնորոշվում են որպես ցանկացած փոխադրամիջոցներ՝ ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական, մշտական կամ ժամանակավոր, որոնք նախատեսված են բացառապես սանիտարական փոխադրման համար և գտնվում են կոնֆլիկտի մեջ գտնվող կողմի իշխանության իրավասու մարմնի վերահսկողության տակ:







74. Հարկ է նկատել, որ չնայած թիվ 1 լրացուցիչ արձանագրությունը չի վավերացվել Ադրբեջանի կողմից, այդուհանդերձ 21-րդ հոդվածի դրույթները, որոնք քաղաքացիական բժշկական փոխադրամիջոցներին ընձեռում են նույնպիսի պաշտպանություն, ինչպես զինվորականներին, համարվում

են սովորութային նորմ և այդպիսով կիրառելի են՝ անկախ արձանագրության վավերացման հանգամանքից:

75. Բացի այդ, մի շարք լրատվամիջոցների հաղորդմամբ, սեպտեմբերի 14-ին ադրբեջանական զինված ուժերը կրակ են բացել Սոթքի ուղղությամբ, որտեղ այդ պահին իրենց մասնագիտական գործունեությունն են իրականացրել Արմենպրեսի (անձնական տվյալներ՝ Կ.Կ., Հ.Մ. և Հ.Մ.), Ռադար Արմենիայի (Radar Armenia) և Հանրային հեռուստաընկերության լրագրողները, ինչպես նաև օտարերկրյա լրագրողներ: Լրագրողների հաղորդմամբ, նրանց ուղղությամբ երկու արկ է ընկել. տուժածներ չկան[40]:

76. Միաժամանակ, Արմենպրեսսի կողմից հրապարակվել է տեսանյութ, որում լսվում է արկի պայթյունի ձայնը և տեսանելի են հակառակ ուղղությամբ վազող մի քանի անձինք, որոնցից ոմանք կրում են «PRESS» (մամուլ) գրությամբ բաճկոններ: [41]

77. Լրագրողների նկատմամբ նման հարձակումներն ու թիրախավորումը սովորութային միջազգային հումանիտար իրավունքի կոպիտ խախտում են: Զինված ընդհարման շրջաններում, միջազգային հումանիտար իրավունքի համաձայն, մասնագիտական առաքելություն իրականացնող լրագրողներն օգտվում են պաշտպանությունից, քանի դեռ վերջիններս ուղղակիորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին:

78. Ավելին, արձանագրության 79-րդ հոդվածի համաձայն՝

«1. Զինված կոնֆլիկտի շրջաններում վտանգավոր մասնագիտական գործուղումների մեջ գտնվող լրագրողները դիտվում են որպես քաղաքացիական անձինք 50 հոդվածի (1 կետ) նշանակությամբ:

2. Որպես այդպիսիք նրանք օգտվում են պաշտպանությունից Կոնվենցիաներին և սույն Արձանագրությանը համապատասխան, պայմանով, որ նրանք ոչ մի այնպիսի գործողություն չեն կատարում, որն անհամատեղելի է քաղաքացիական անձանց նրանց կարգավիճակի հետ, և գործում են առանց վնաս հասցնելու զինված ուժերում հավատարմագրված զինվորական թղթակիցների՝ Երրորդ կոնվենցիայի 4 A) 4) հոդվածով նախատեսված կարգավիճակի իրավունքին:(…)»:

79. Ավելին՝ թիվ 1 լրացուցիչ արձանագրության 51-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական բնակչությունը որպես այդպիսին, ինչպես նաև քաղաքացիական առանձին անձինք չպետք է հանդիսանան հարձակումների օբյեկտ: Միաժամանակ՝ արձանագրության 85-րդ հոդվածի 3-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ քաղաքացիական բնակչության կամ քաղաքացիական առանձին անձանց

---

[40] «Ադրբեջանական ԶՈւ-ն Սոթքում թիրախավորել է լրագրողների խմբին», Radar Armenia, 14.09.2022թ., հասանելի՝ https://radar.am/hy/news/social-2526323813/ (դիտված 15.09.2022թ.)

[41] «Սոթքում թիրախավորել են հայ և արտասահմանցի լրագրողների», Արմենպրեսս, 14.09.2022թ., հասանելի՝ https://armenpress.am/arm/news/1092539.html (դիտված 15.09.2022թ.),

վերածումը հարձակման օբյեկտի դիտվում է որպես թիվ 1 լրացուցիչ արձանագրության լուրջ խախտումներ:

80. Ադրբեջանական զինված ուժերի կողմից ռազմական հարձակումը լուսաբանող լրագրողների խմբի թիրախավորումը հետապնդում է Ադրբեջանի կողմից ակտիվորեն իրականացվող տեղեկատվական դիվերսիաների ու մանիպուլյատիվ տեղեկությունների համար պարարատ դաշտ ապահովելու նպատակ, քանի որ իրադարձությունները դրանց զարգացման պահին լուսաբանող լրագրողները, հատկապես օտարերկրյա մեդիայի ներկայացուցիչները, կարող են բացահայտել իրական փաստերը միջազգային ու տեղական հանրության համար:

## V. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

81. Զինված հակամարտություններում երեխաներն ամենախոցելի խումբն են, ուստի, երեխաների հիմնարար իրավունքները, ներառյալ նրանց կյանքի իրավունքը, ընտանիքում և համայնքում ապրելու, առողջության իրավունքը, անձնային զարգացման իրավունքը, դաստիարակվելու և պաշտպանվելու իրավունքը, հատուկ ուշադրություն են պահանջում:



82. Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումները և այս պահին հավաքագրված փաստերի ուսումնասիրությունը վկայում են, որ 2022 թվականի սեպտեմբերի 13-15-ին Սյունիքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում քաղաքացիական բնակչությունը և կենսական հանրային ենթակառուցվածքները, այդ թվում՝ ուսումնական հաստատությունները գտնվել են ադրբեջանական ԶՈՒ չտարբերակված թիրախավորման ներքո: Նման վարվելակերպի դրսևորմամբ խախտվել են քաղաքացիական բնակչության, այդ թվում՝ երեխաների, միջազգային իրավական ակտերով երաշխավորված մի շարք իրավունքներ:

83. Տուժած բնակավայրերի բնակիչները, վախենալով հատկապես՝ երեխաների կյանքի համար, ստիպված են եղել ընտանիքներով լքել իրենց տները կամ երեխաներին տեղահանել ավելի ապահով վայրեր՝ այլ ուղեկցող անձանց հետ՝ իրենք մնալով համայնքներում: Այսպես, ադրբեջանական զինված ուժերի պատերազմական գործողությունների հետևանքով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում հավաքագրված տվյալների համաձայն՝ Սյունիքի մարզում՝ առնվազն 276, Վայոց ձորի մարզում՝ առնվազն 851, Գեղարքունիքի մարզում առնվազն 300 երեխա է տեղահանվել իր բնակավայրից, ընդհանուր՝ առնվազն 1427 երեխա տեղահանվել է իր բնակության վայրից, ինչպես նա և խախտվել են վերջիններիս հիմնարար իրավունքները:

84. Հատուկ պետք է ընդգծել, որ ադրբեջանական զինված ուժերի կողմից տարբեր տրամաչափի զինտեխնիկայի կիրառումն առավել ինտենսիվ է եղել հատկապես երեխաների՝ դպրոց և մանկապարտեզ հաճախելու ժամերին: Բացի այդ, ստեղծված իրավիճակում, հատկապես տեղահանված համայնքների երեխաները զրկված են կրթության իրավունքի իրացման հնարավորությունից:

85. Որոշ դեպքերում դպրոցները և մանկապարտեզները գտնվել են ադրբեջանական զինված ուժերի ուղիղ նշանառության և թիրախավորման ներքո: Պաշտպանի աշխատակազմի հավաքագրած տեղեկությունները վկայում են ուսումնական հաստատությունների ուղղությամբ ադրբեջանական զինված ուժերի կողմից տարբեր զինատեսակների կիրառման մասին: Օրինակ՝ վնասվել է Գեղարքունիքի մարզի Սոթք համայնքի ուսումնական հաստատությունը:



*Սոթք համայնքում թիրախավորված ուսումնական հաստատություն*



86. Պաշտպանի աշխատակազմի մեդիամոնիտորինգի արդյունքում հավաքագրված տվյալները վկայում են նաև, որ ադրբեջանական զինված ուժերի կողմից քաղաքացիական բնակչություն և չտարբերակված թիրախավորման արդյունքում տուժած բնակավայրերի որոշ բնակիչներ անգամ չեն հասցրել լքել հակամարտության գոտին և ստիպված են եղել երեխաների հետ թաքնվել մոտակա քարանձավներում: Օրինակ, Սյունիքի մարզի Վերիշեն համայնքի ընտանիքներից մեկն իր երեխաների հետ հրետակոծությունից պատսպարվել է մոտակա քարանձավում:

87. Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ զինված հակամարտության կամ ռազմական իրավիճակում ռազմական գործողությունների չմասնակցող երեխաների իրավունքները երաշխավորվում են «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» 1949 թ. Ժնևի կոնվենցիայով (այսուհետ՝ չորրորդ կոնվենցիա), ինչպես նաև 1977 թվականի հունիսի 8-ի թիվ 1 լրացուցիչ արձանագրությամբ:

88. Սովորութային միջազգային մարդասիրական իրավունքով ամրագրվում է զինված հակամարտություններից տուժած երեխաների հատուկ հարգանքի և պաշտպանության ներքո գտնվելը: Նշվածը, մասնավորապես, ներառում է՝ սեռական բռնության բոլոր ձևերից պաշտպանություն, ազատությունից զրկված անձանցից երեխաների բաժանում/ առանձնացում, եթե նրանք նույն ընտանիքի անդամներ չեն, սննդի, առողջապահական ծառայությունների, կրթության, մատչելիության

ապահովում, մարտական գործողությունների տարածքից անվտանգության ապահովման նպատակով տեղահանում, առանց ուղեկցողի մնացած երեխաների վերամիավորում իրենց ընտանիքների հետ:

89. Երեխաների իրավունքների կոմիտեի, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, Գլխավոր ասամբլեայի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից ընդունված փաստաթղթերով կարևորվել է ոչ միայն ռազմական գործողությունների ընթացքում երեխաների իրավունքների խախտման անթույլատրելի լինելը, այլ նաև հետևանքների կանխարգելման այն հրամայականը, որն անհրաժեշտ է երեխաների առօրյա կյանքի, նրանց մտավոր և ֆիզիկական զարգացման երաշխավորման համար: Այս կառույցների կողմից բազմիցս դատապարտվել է նաև ուսումնական հաստատությունների, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վրա հարձակումն ու նրանց թիրախավորումը:

90. Կարևոր է ընդգծել նաև, որ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան ուղղակիորեն սահմանում է, որ պատերազմական գործողություններից տուժած երեխաների խնամքի և պաշտպանության համար պետք է կիրառվեն հատուկ միջոցներ: Ավելին՝ Կոնվենցիայի 38-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են հարգել միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը, որոնք կիրառվում են զինված ընդհարումների դեպքում և առնչվում են երեխաներին, և ապահովել դրանց նկատմամբ հարգանքը:

91. Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանն արձանագրում է, որ Ադրբեջանի կողմից շարունակվող ռազմական գործողություններն ուղղակիորեն ազդում են երեխաների բնականոն կյանքի վրա՝ կոպտորեն խախտելով միջազգային իրավունքով երաշխավորված հիմնարար իրավունքները: Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմում այս պահի դրությամբ հավաքագրված տվյալները վկայում են, որ Սյունիքի, Վայոց ձորի և Գեղարքունիքի մարզերում ադրբեջանական հարձակման հետևանքով խախտվել են երեխայի կյանքի, առողջության, անվտանգ և ապահով միջավայրում ապրելու, ընտանիքում և համայնքում ապրելու, անձնային զարգացման ու պաշտպանության և մի շարք այլ իրավունքներ:

## VI. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

92. Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումները և այս պահին հավաքագրված փաստերի ուսումնասիրությունը վկայում են, որ 2022 թվականի սեպտեմբերի 13-14-ին Սյունիքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում քաղաքացիական բնակչությունը և կենսական հանրային ենթակառուցվածքները

գտնվել են ադրբեջանական ԶՈՒ չտարբերակված թիրախավորման ներքո՝ խախտելով քաղաքացիական բնակչության, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային իրավական ակտերով երաշխավորված մի շարք իրավունքներ: Պաշտպանի աշխատակազմի հավաքագրած տեղեկությունների համաձայն՝ ստեղծված իրավիճակում ադրբեջանական զինված ուժերի գործողությունների հետևանքով Գեղարքունիքի մարզի որոշ գյուղերից, այդ թվում՝ Կութից և Սոթքից, տեղահանվել են առնվազն 46 հաշմանդամություն ունեցող անձ, Սյունիքի մարզի որոշ գյուղերից, այդ թվում՝ Ներքին Հանդից, Ճակատենից, Դավիթ Բեկից՝ առնվազն 22 հաշմանդամություն ունեցող անձ, Վայոց ձորի որոշ համայնքներից, այդ թվում՝ Ջերմուկից, Գնդեվազից՝ առնվազն 31 հաշմանդամություն ունեցող անձ:

93. Հատուկ պետք է արձանագրել, որ ադրբեջանական ԶՈՒ չտարբերակված թիրախավորման և տարբեր տրամաչափերի զինատեսակների կիրառման ինտենսիվությամբ պայմանավորված՝ նշված մարզերի որոշ համայնքներից հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցները գործնականում զրկվել են տեղահանման հնարավորությունից: Օրինակ՝ Սյունիքի մարզի Ճակատեն, Սյունիք և Սրաշեն համայնքներում հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև տարբեր առողջական խնդիրներ ունեցող որոշ անձինք և նրանց խնամող անձինք չեն տեղահանվել: Պետք է ընդգծել նաև, որ չտեղահանված հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում ոմանք գտնվում են անկողնային ռեժիմում, ինչն էլ ավելի է դժվարացնում նրանց անվտանգության ապահովումը և խնամքը համայնքում: Թեև համայնքներում հերթապահություն իրականացնող բուժանձնակազմերը գործնականում փորձել են հնարավորինս ապահովել վերջիններիս բժշկական վերահսկողությունը, այնուամենայնիվ, մարդու իրավունքների պաշտպանության և միջազգային մարդասիրական իրավունքի տեսանկյունից խնդրահարույց է այն փաստը, որ նշված անձանց համար գործնականում ապահովված չեն իրենց իրավունքների իրացման համար անհրաժեշտ հնարավորությունները:

94. Ադրբեջանական զինված ուժերի կողմից Վարդենիս քաղաքի թիրախավորման արդյունքում ուղղակիորեն վտանգվել են Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում բնակվող հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող շուրջ 450 անձանց կյանքի, անվտանգության և առողջության իրավունքները, ինչպես նաև լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծել վերջիններիս բժշկական, սոցիալական և այլ ծառայությունների մատուցման համար: Նշվածն արձանագրվել է նաև Հաշմանդամության եվրոպական ֆորումի և «Հոգեկան առողջությունը Եվրոպայում» կազմակերպության կողմից:[42]

---

[42] Համատեղ հայտարարություն Հայաստանի սահմանին հարձակման մասին, Եվրոպական հաշմանդամության ֆորում (European Disability Forum) և «Հաշմանդամություն ունցող անձանց իրավունքների օրակարգ և հոգեկան առողջություն» Եվրոպայ (Disability Rights Agenda and Mental Health Europe), 15.09.2022թ., Հասանելի՝

95. Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում հաշմանդամություն ունեցողների՝ որպես ծառայությունների հասանելիության և մատչելիության խաթարման հետևանքով հատուկ պաշտպանության կարիք ունեցող անձանց ճանաչումը թվագրվում է ընդհուպ 1949 թվական:

96. Հատուկ պետք է ընդգծել, որ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հարգանքի և նրանց պաշտպանության, այդ թվում՝ տարհանման համար հատուկ միջոցների կիրառման պահանջները սահմանված են «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի երրորդ և չորրորդ կոնվենցիաներով (Ժնևի երրորդ կոնվենցիայի 16-րդ, 30-րդ, 40-րդ, 45-րդ հոդվածներ, Ժնևի չորրորդ կոնվենցիայի 16-րդ, 17-րդ, 21-րդ, 22-րդ, 27–րդ, 85-րդ, 119-րդ և 127-րդ հոդվածներ), այլ միջազգային իրավական ակտերով և սովորույթային իրավունքով: Ընդ որում՝ տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանության հատուկ միջոցները կարող են տարբեր լինել՝ կախված այն իրավիճակից, որում վերջիններս հայտնվել են: Այսպես, Ժնևի չորրորդ կոնվենցիայի 14-րդ և 17-րդ հոդվածներով, որպես այս պարտավորության պատշաճ կատարման հնարավորություն, դիտարկվում է տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց համար շրջափակված կամ պաշարված տարածքներից տարհանման անվտանգության գոտիների ստեղծումը, հակամարտող կողմերի միջև հատուկ համաձայնությունների ձեռքբերումը: Միաժամանակ, կարևոր է նշել, որ հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև անհապաղ բժշկական օգնության կամ խնամքի կարիք ունեցող ցանկացած անձի համար հակամարտող կողմերը պետք է ստեղծեն և ապահովեն բժշկական օգնության, այդ թվում՝ առաջնահերթության կարգով մարդասիրական աջակցության տրամադրման համար անհրաժեշտ իրական հնարավորություններ:

97. Այս կապակցությամբ պետք է հաշվի առնել, որ զինված հակամարտությունը, պատերազմը, պատերազմական գործողությունները, ռազմական իրավիճակը կամ ռազմական դրությունը լրացուցիչ մարտահրավերներ են ստեղծում հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ առաջացնելով առանձնահատուկ պայմանների ապահովման անհրաժեշտություն: Միաժամանակ, կենսական պայմանների և ծառայությունների հասանելիության խնդիրները, այդ թվում՝ ջրի, սանիտարահիգիենիկ պայմանների, սննդի, ապաստարանի, առողջապահական ծառայությունների անարգել ապահովման և տրամադրման խոչընդոտները հումանիտար աղետի պատճառ կարող են դառնալ: Այս համատեքստում հաշմանդամություն ունեցող անձինք, իրենց հատուկ կարիքներով և առողջական

https://www.edf-feph.org/joint-statement-about-the-attacks-on-the-armenian-border/ (անգլերեն), դիտված՝ 30.09.2022թ.

խնդիրներով պայմանավորված, կրկնակի խոցելի են: Ուստի, ինչպես միջազգային հումանիտար իրավունքը, այնպես էլ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան նպատակ են հետապնդում լրացուցիչ երաշխիքներ ստեղծել զինված հակամարտությունների, պատերազմական գործողությունների, վտանգավոր կամ արտակարգ հումանիտար իրավիճակների ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման համար: Այսպես, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 11-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունները, միջազգային իրավունքով սահմանված իրենց պարտավորություններին, ինչպես նաև միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների միջազգային իրավունքին համապատասխան, պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանությունը և ապահովությունը վտանգավոր իրավիճակներում, այդ թվում՝ զինված հակամարտությունների, արտակարգ հումանիտար իրավիճակների դեպքում: Այս դրույթի կիրառումը ներառում է նաև հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի, արժանապատվության, անվտանգության համար անհրաժեշտ հիմնական ծառայությունների հասանելիության ապահովումը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով: Ի լրումն՝ 2019 թվականին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2475 (2019) բանաձևով կոչ է արվում զինված հակամարտության կողմերին թույլատրել և հեշտացնել մարդասիրական անվտանգ, ժամանակին և անարգել մուտքը բոլոր մարդկանց, ովքեր օգնության կարիք ունեն, կանխել բռնությունը քաղաքացիական անձանց նկատմամբ զինված հակամարտությունների իրավիճակներում, այդ թվում՝ սպանությունները, խաղումները, առևանգումները, խոշտանգումները, սեռական բնույթի բռնության ձևերը, ինչպես հակամարտության ընթացքում, այնպես էլ դրանից հետո:

98. ՄԻՊ աշխատակազմի մշտադիտարկումները և այս պահին հավաքագրված փաստերի ուսումնասիրությունը վկայում են, որ ադրբեջանական զինված ուժերի՝ չտարբերակված թիրախավորմամբ զուգորդված Հայաստանի Հանրապետության վրա հարձակման հետևանքով խախտվում են հաշմանդամություն ունեցող անձանց մի շարք իրավունքներ, այդ թվում՝ կյանքի, անվտանգության և առողջության պահպանման իրավունքները՝ անտեսելով միջազգային մարդասիրական իրավունքի և Ժնևյան կոնվենցիաների պահանջները:

## VII. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՒ ԿԵՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԹԻՐԱԽԱՎՈՐՈՒՄ

### 1. Սպանված և վիրավորված քաղաքացիներ

99. 2022 թվականի սեպտեմբերի 12-ի լույս 13-ի գիշերը սկսված զինված հարձակման ընթացքում ադրբեջանական զինված ուժերի կողմից տարբեր զինատեսակներից, այդ թվում՝ ԱԹՍ-ներից, ծանր հրետանային զենքերից ինտենսիվ հրետակոծության են ենթարկվել Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի մի շարք համայնքներ:

100. Ուղիղ թիրախավորվել են նաև քաղաքացիական բնակչությունն ու քաղաքացիական ենթակառուցվածքները:

101. Սեպտեմբերի 13-15-ին Ադրբեջանի զինված ուժերի լայնածավալ և համակարգված հարձակումների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված փաստահավաք աշխատանքների արդյունքում վերը հիշատակված մարզերում արձանագրվել է 4 քաղաքացիական անձանց մահվան դեպք.

- Հ.Գ., ծնված 1993թ. զոհվել է Սյունիքի մարզի Նորավան համայնքում անասնապահությամբ զբաղվելու ընթացքում ադրբեջանական զինված ուժերի կողմից կիրառված արկի պայթյունի հետևանքով:
- Բ. Ք., ծնված 1960թ., զոհվել է Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնքում գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու ժամանակ:
- Մ. Ա., 1990թ., Սյունիքի մարզ, Տեղ համայնք, մահացել է Աստղիկ Բ/Կ-ում, վիրավորում ստացել է անասնապահական աշխատանքներ կատարելու ընթացքում:
- Բ. Ս., 1964թ., զոհվել է Ջերմուկում, շինարարական տեխնիկայով աշխատանքների կատարման ժամանակ:

Արձանագրվել է նաև անհայտ կորած քաղաքացիական անձի մասով տվյալ.

- Ա. Ա., 1986թ., Գեղարքունիքի մարզ, Վարդենիս համայնք:

102. Սեպտեմբերի 13-14-ի ընթացքում 7 քաղաքացիական անձինք վիրավորումներ են ստացել, որոնցից մեկը՝ տարեց կին: Քաղաքացիական վիրավորներից 5-ը վիրավորումը ստացել են Գեղարքունիքի մարզում և 2 անձ՝ Վայոց ձորի մարզում:

103. Ադրբեջանական հարձակման հետևանքով առաջացած հումանիտար և այլ բնույթի խնդիրներն ուսումնասիրելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թիմերն այցեր են իրականացվել հարձակման

ենթարկվող սահմանային բնակավայրեր, տեղերում արձանագրելով, որ գյուղերի ուղղությամբ հրետանային և ռազմաօդային, այդ թվում՝ անօդաչու թռչող սարքերով (ԱԹՍ) հարձակումներ իրականացվել են սեպտեմբերի 13-ին և 14-ին՝ օրվա բոլոր ժամերին:

## 2. Քաղաքացիական տներ, և կենսական նշանակության ենթակառուցվածքներ և այլ օբյեկտներ

104. Ադրբեջանը զինված հարձակման ընթացքում կանխամտածված թիրախավորել է խաղաղ քաղաքացիական բնակչությանը, քաղաքացիական ենթակառուցվածքները, ներառյալ Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց ձորի սահմանամերձ համայնքների բնակելի տները: Ոչ ընտրողական հարձակումները իրական սպառնալիքի տակ են դնում խաղաղ բնակչության կյանքի իրավունքը, առողջության պահպանման իրավունքը:

### Ա. Քաղաքացիական տներ, ավտոմեքենաներ

105. Սեպտեմբերի 13-ից 14-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանի զինված ուժերի կողմից կրակ է բացվել Գորիս քաղաքի մերձակա քաղաքացիական համայնքների ուղղությամբ: Մասնավորապես, Վերիշեն համայնքի բնակիչներից մեկը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին տեղեկացրել է, որ իր տան նկուղն ու պատերը փլուզվել են, իսկ ՀՀ քաղաքացի Գ. Հ.-ին պատկանող տունը վնասվել է (Տե՛ս Հավելված 2):

106. Սեպտեմբերի 14-ին 12:30-ի շրջանում Սյունիքի մարզի Ակներ համայնքում հրետակոծության է ենթարկվել մեկ տուն (Տե՛ս Հավելված 3):

107. Սյունիքի մարզի Քարաշեն համայնքի ուղղությամբ արձակված հրթիռն ընկել է բնակելի տան վրա և լրջորեն վնասել այն (Տե՛ս Հավելված 4):

108. Ադրբեջանի զինված ուժերի կողմից Սյունիքի մարզի Վաղատուր համայնքի ուղղությամբ իրականացված չտարբերակված հրետակոծության արդյունքում ավերվել են երեք բնակելի տների տանիքներ:

109. Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա համայնքում վնասվել է գյուղացիներից մեկի մեքենան[43] և մոտ 1000 հակ խոտ (անասնակեր): Նույն համայնքում վնասվել է 8 տուն և այլ հարակից շինություններ:

